Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.**Անունը**, **ազգանունը**.

Արսեն Թորոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**.

Առողջապահության նախարարի պաշտոնակատար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**.

Կատարի Պետություն (Դոհա), 2018 թվական, նոյեմբերի 12-14

4. **Հրավիրող կողմը**.

Կատարի Պետության առողջապահության նախարար տիկին Հանան Ալ Կուվարի

5. **Գործուղման նպատակը** (**աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը**).

Մասնակցություն «Առողջապահության Համաշխարհային նորարարական գագաթնաժողով 2018»-ին, երկկողմ բանակցություններ Կատարի Պետության առողջապահության նախարարի հետ:

Գագաթնաժողովը նպատակ ուներ տեխնոլոգիապես ու մասնագիտական առումով բարելավելու առողջապահական ծառայությունների մակարդակը համագործակցող երկրներում, մշակելու առաջարկներ՝ ապացույցների վրա հիմնված նորարարական առողջապահական քաղաքականությունների համար, ինչպես նաև առողջապահության ոլորտում բարեփոխումներ ձեռնարկած առաջնորդների համար ծառայելու որպես համագործակցության հարթակ՝ փոխշահավետ ծրագրեր իրագործելու համար, այդ թվում ստանալով նաև Կատարի Պետության օժանդակությունը::

6. **Քննարկված թեմաները**.

Միջոցառմանը հրավիրված էին մասնակցելու տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ, նախարարներ, համաշխարհային առաջատար փորձագետներ, նշանավոր գիտնականներ և հետազոտողներ, նորարարներ և սոցիալական ոլորտի ձեռներեցներ:

Հանդիպմանը քննարկվեցին նորարարական լուծումներ՝ առողջապահական համաշխարհային մարտահրավերներին դիմագրավելու համար: Առանձին քննարկում եղավ նաև Կատարի առողջապահության նախարարի հետ՝ առողջապահության բնագավառում հայ-կատարական համագործակցություն սկսելու և զարգացնելու ուղղությամբ:

7. **Հանդիպումները**, **ելույթները**, **բարձրացված կամ քննարկված հարցերը**.

Գագաթնաժողովում քննարկվեցին նաև բժշկագիտական թեմաներ, մասնավորապես հոգեկան առողջությանը, վիրուսային հեպատիտին, ակնաբուժությանը, բուժքույրությանը, համընդհանուր առողջապահական ծածկույթին, առողջապահության մեջ մասնավոր սեկտորի դերին վերաբերող և այլ առանցքային հարցեր:

Առողջապահության նախարարի պաշտոնակատարը մասնակցեց «Առողջապահական նորարարությունների համընդհանուր տարածումը» թեմայով պանելային քննարկում-բրիֆինգին, ներկայացրեց իր մոտեցումները թեմայի շուրջ, պատասխանեց բարձրացված հարցերին:

Կատարի Պետության առողջապահության նախարարի հետ հանդիպումն անցավ ջերմ, միաժամանակ՝ գործնական մթնոլորտում: Երկու գերատեսչությունների միջև նախորդ տարիներին հարաբերություններ հաստատելու փորձերը չէին հաջողել, ուստի ուրախալի է, որ այցը և երկկողմ շփումը հնարավորություն տվեց վերջապես պայմանավորվածություններ ձեռք բերել հնարավոր համագործակցության շուրջ: Կողմերը քննարկեցին առողջապահության բնագավառում համագործակցության լայն շրջանակ, ընդգրկելով նաև մասնագիտական առանձին ուղղություններով համագործակցելու հեռանկարները՝ հոգեբուժություն, բարձր տեխնոլոգիական ախտորոշում և բուժում, կադրերի կրթություն ռեզիդենտուրայում և այլն: Հայաստանի առողջապահության նախարարի պաշտոնակատարը նշեց, որ ցանկալի է, հնարավորության դեպքում, Հայաստանն ընդգրկել Կատարի

Զարգացման Հիմնադրամի հետ համագործակցող և նրանից աջակցություն ստացող երկրների շարքում: Նշված հիմնադրամը հսկայական ֆինանսական միջոցներ է ծախսում աշխարհի տարբեր երկրներում աջակցության, այդ թվում նաև՝ առողջապահության ոլորտում ծրագրեր իրագործելու ուղղությամբ: Ընդգծվեց, որ Կատարի առողջապահության նախարարությունը վերջերս երկամյա համագործակցության համաձայնագիր է ստորագրել Կատարի Զարգացման Հիմնադրամի հետ:

Կատարի առողջապահության նախարար տիկին Ալ Կուվարին հայտնեց, որ իր պետությունը պատրաստ է ամենայն ուշադրությամբ քննարկելու և աջակցության պատրաստակամությամբ մոտենալու Հայաստանի առողջապահության նախարարությունից ստացվող ծրագրային առաջարկներին: Տիկին Կուվարին առաջարկեց նաև համագործակցության համաձայնագիր ստորագրել կողմերի միջև՝ հանձնարարելով, որ իր գերատեսչությունը հայկական կողմի քննարկմանն ուղարկի վերջինիս նախագիծը: Դրանով իրավական տեսանկյունից Կողմերի համագործակցությունն ավելի կամրագրվի:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները**, **պայմանավոր-վածությունները**, **ստորագրված փաստաթղթերը**.

Գագաթնաժողովի ընթացքում հնչեցվեց տարբեր երկրների դրական փորձը, լսվեցին միջազգային փորձագետների, հեղինակավոր մասնագետների կարծիքներն ու առաջարկները: Տարբեր երկրների առողջապահության ոլորտի ներկայացուցիչների միջև քննարկվեցին հնարավոր համագործակցության ուղղություններն ու հեռանկարները, որոնք կնպաստեն միմյանց բնակչությունների առողջության բարելավմանը և բարեկեցությանը:

9. **Առաջարկությունները**, **դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը**, **ձևը**, **ժամկետները**, **պատասխանատուները**, **ակնկալվող արդյունքները**.

Կատարի Պետության առողջապահության նախարարության հետ ձեռք բերված պայմանավորվածություններին գործնական ընթացք տալու նպատակով առաջիկայում ՀՀ ԱԳՆ կներկայացվի Առողջապահության նախարարության

դիրքորոշումն արտահայտող նամակը՝ ներառելով ծրագրային առաջարկներ, այդ թվում նաև միջգերատեսչական համագործակցության համաձայնագիր ստորագրելու համար ներպետական գործընթաց սկսելու առաջարկը: Նախատեսում ենք նաև Կատարի Պետության առողջապահության նախարարին ուղղել հրավեր՝ հարմար ժամկետում Հայաստան այցելելու՝ երկկողմ համագործակցությունը խորացնելու, այդ թվում նաև՝ միջգերատեսչական համագործակցության համաձայնագիր ստորագրելու նպատակով:

10. **Ստորագրությունը**, **ամսաթիվը**:

15.11.2018

X

VERIFIED OCSP 15.11.2018 18:15:56 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

2018թ. նոյեմբերի 15